Էլ-15547

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիդյան

«28» 11 2023թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0212-23

Ձեռնարկողը՝ **«Լեռ Սոլար» ՍՊԸ**
Երևան 0054, Դավիթաշեն, 3ԹՂՄ, /Շ/10, 28բն

Գործունեությունը՝ **«Լեռնագոգ 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**
Արմավիրի մարզ, Լեռնագոգ բնակավայր

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝ Խաչիկ Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 0212-23

«28» 11 2023թ.

Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի 2 հողամասում «Լեռնագոգ 1» արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ձեռնարկող՝	«Լեռ Սոլար» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայրը՝	Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի 2 հողամաս

Ներածական մաս. «Լեռ Սոլար» Ընկերության կողմից ներկայացված նախնական գնահատման հայտով Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի 2 հողամասում նախատեսում է կառուցել արևային ֆոտովոլտային էլեկտրակայան: «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի,1) կետի «գ» ենթակետի համաձայն նախատեսվող գործունեությունը, որպես էներգետիկայի բնագավառ հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Նախատեսվող գործունեության իրականացման համար հիմք են հանդիսացել գործունեության նախագծային փաստաթղթերը:

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի գրանցման վկայականը՝ N 21042023-04-0009:
- Ճարտարապետահատակագծային առաջադրանքը:
- Գործունեության իրականացման Լիցենզիան՝ ԼԷ N0740:
- «ՀԷՑ» ՓԲ ընկերության կողմից տրամադրված տեղեկանքը և բաշխման ցանցին միացման տեխնիկական պայմանը:

Նկարագրական մաս. Արևային կայանի նպատակը ֆոտովոլտային արտադրական կայանի կառուցումն է, էլեկտրաէներգիայի արտադրության նպատակով:

Գեոմորֆոլոգիական տեսակետից ուսումնասիրվող տարածքը գտնվում է

մարզկենտրոնից՝ 25կմ հյուսիս-արևմուտք, ծովի մակարդակից 1035 մ բարձրության վրա:

Տեղազննվող տարածքը ներկայացնում է միջին բարձրության լեռնային հարթություններ, որին բնորոշ է լավաներով ծածկված սարավանդները և ձորակներով կտրտված լանդշաֆտը: Նախատեսվող գործունեության ենթակա և հարակից տարածքում բացակայում են հատուկ պահպանվող տարածքները: Գործունեության տարածքը «Որդան կարմիր» պետական արգելավայրից գտնվում է մոտ 25 կմ հեռավորության վրա: Նախատեսվող գործունեության ենթակա տարածքում բնության, պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ չեն հայտնաբերվել:

Նախատեսվող գործունեությունը իրականացվելու է Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի 2 հողամասում՝ 8.15472 հա տարածքի վրա: Նախատեսվում է արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի, 6600 կՎտ հզորության 35/0,8 կՎ լարման տրանսֆորմատորային ենթակայանի կառուցում և դրա միացումը 110/35 կՎ տրանսֆորմատորային ենթակայանին:

Ֆոտովոլտային վահանակների զբաղեցրած մակերեսը կազմելու է 2,446 հա: Առավելագույն դրվածքային հզորությունն ըստ վահանակների կազմում է 7.176ՄՎտ, իսկ արևակայանի առավելագույն հզորությունը կազմում է 6600 կՎտ: Ֆոտովոլային կայանի գեներատորային մասը նախատեսվում է կառուցել 12480 հատ բազմաբյուրեղային ֆոտովոլտային վահանակներով՝ յուրաքանչյուրը 575Վտ առավելագույն հզորությամբ: 20 հատ՝ 330 կՎտ ելքային հզորությամբ փոխակերպիչների փոփոխական հոսանքի ելուստներից մալուխները միանալու են ենթակայանի 0.8կՎ լարման գլխավոր ընդունիչ վահաններին:

Արևային էլեկտրակայանը տեղադրվելու է ցինկով գալվանապատված մետաղական կոնստրուկցիաներով՝ բետոնե հիմքերով ամրացված հողի վրա: Փոխակերպիչները և ֆոտովոլտային վահանակները տեղադրվելու են կոնստրուկցիայով՝ հորիզոնի նկատմամբ 24° թեքությամբ: Ֆոտովոլտային վահանակների կոնստրուկցիաները նախատեսված են մինչև 35մ/վ քամու արագության համար (տարածքում քամու առավելագույն արագությունը ըստ շինարարական կլիմայաբանություն նորմերի 24մ/վ է, (ՀՀ ՇՆ II-7.01-2011):

Ենթակայանի կառուցման համար նախատեսվում է տեղադրել 6600կՎտ հզորության, 35/0,8կՎ լարման տրասֆորմատորային լրակազմ JUPITER-6000K-H1 տիպի: Հաշվառքն իրականացվում է 110/35կՎ ենթակայանում: JUPITER-6000K-H1 լրակազմը բաղկացած է երեք բաժիններից՝

- Ցածր լարման բաժին, որում գտնվում են 0,8կՎ վահանները,
- Տրանսֆորմատորի բաժին, որում տեղադրված է 6600կՎտ հզորության, 35/0,8կՎ լարման յուղային երկփաթույթ տրանսֆորմատոր

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS

- Բարձր լարման բաժին, որում տեղադրված են 35կՎ անջատիչներ և 35կՎ գերլարման սահմանափակիչներ:

Տրանսֆորմատորի բաժնի տակ նախատեսված է յուղընդունիչ, համաձայն ՊՍԷ-74.2.69 կետի պահանջների:

Կոնտեյներից ելքն իրականացվում է այլումինե հաղորդալարերով АПвП 3x70մմ^2 տիպի եռաջիղ մալուխով: Մալուխը մոնտաժվում է խրամուղով մինչև N2 ենթակայան: Ուղեգծի ամբողջ երկայնքով մալուխները մոնտաժվում են սեփական տարածքով:

Արևային կայանը օդային գիծ չունի, օդային գիծը վերաբերում է տարածքում նախատեսվող 110/35կՎ ենթակայանին, որը միանալու է «Արմավիր» 110կՎ օդային գծին՝ 80մ թռիչքով, հենարան չի տեղադրվելու:

Շինհրապարակը ցանկապատվելու է ժամանակավոր անթափանց ցանցաթաղանթով: Շինհրապարակն ապահովված է լինելու գիշերային լուսավորությամբ, էլեկտրականությամբ, պահպանվելու են անվտանգության և հակահրդեհային պայմանները:

Գործունեության ենթակա տարածքում բացակայում են ջրամատակարարման և ջրահեռացման, էներգամատակարարման, գազամատակարարման համակարգերը: Շինարարության փուլում օգտագործվելու են տեխնիկա-տրանսպորտային միջոցներ, որոնք լինելու են Կապալառու կազմակերպության սեփական միջոցները կամ վարձակալվելու են այլ կազմակերպություններից:

Ենթակայանի կառուցման և մալուխագծերի անցկացման համար փորվելու են մոտ 500խմ գրունտ, որից մոտ 400խմ գրունտը կատարվելու է հետլիցք: Մնացած մոտ 100խմ հողային գրունտը տեղափոխվելու է մոտ 3կմ հեռավորության վրա՝ համայնքապետարանի համաձայնությամբ: **Արևային կայանի** կառուցման արդյունքում հանվելու է 1500 մ^3 գրունտ, որից 1400 մ^3 հետ լիցք, մնացած 100 կհեռացվի աղբավայր: Ընդամենը հանվելու է 2000 մ^3 հողային գրունտ, որից 1800 մ^3 կատարվելու է հետ լիցք, մնացած 200 մ^3 կհեռացվի աղբավայր՝ համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

Աշխատողների համար խմելու ջուրը բերվելու է պատրաստի վիճակում՝ շշերով, ըստ պահանջի: Ջրցանի և տեխնիկական նպատակով օգտագործվելու է տեխնիկական ջուր, որը տարածք է բերվելու ջրցան մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով՝ ըստ պահանջի: Տեխնիկական ջրի պայմանագիրը կկնքվի շինարարական աշխատանքների սկսվելու պահից:

Աշխատողներն օգտվելու են տարածքում տեղադրվող՝ շարժական1,0*1,5 չափերի 6 հատ բիոզուգարանից՝ լվացարանով:

Շինարարության փուլում առաջանալու են թափոններ.

- շինարարական աղբի տեսքով՝ նյութերի մնացորդներ (ավազ, շերեն,

ցեմենտ, պլաստմասե իրեր և այլն),

- աղտոտված լաթեր, պարկեր,
- կենցաղային աղբ
- մետաղական մնացորդներ (մետաղյա լարերի մնացորդներ, տարաներ և այլն):

Շահագործման փուլում բնառեսուրսների օգտագործում չի նախատեսվում, գործելու է միայն էլեկտրամատակարարման համակարգը: Արևակայնն ապահովված է լինելու, արտաքին լուսավորության, տեսահսկման սարքավորումներով:

Արևային կայանի շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցությունները և ռիսկերը շինարարության և շահագործման փուլերում հիմնականում կապված են՝

- օդային ավազանի ՝ պայմանավորված շինտեխնիկայի աշխատանքի արդյունքում օդային ավազան արտանետումների,
- ջրային և հողային ռեսուրսների օգտագործման,
- կենսաբազմազանության,
- արտակարգ իրավիճակների առաջացման,
- թափոնների կառավարման,
- լանդշաֆտի փոփոխությունների,
- շինարարության ընթացքում մարդու առողջության և աշխատանքի անվտանգության հետ:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո կատարվելու է տարածքի բարեկարգում.

- շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը մաքրվելու է ավելորդթափոններից և բերվելու է հնարավորինս նախկին տեսքի,
- շինարարական սարքավորումներն ապամոնտաժվելու են և հեռացվեն
- կատարվելու են տարածքի հարթեցման, բարեկարգման աշխատանքներ,
- մաքրվելու են պանելների մակերևույթները,
- արևակայանի տարածքն ամբողջությամբ ցանկապատվելու է 2030x2700x25մմ

Պատճառաբանական մաս. Արևային ֆոտովոլտային կայանը էլեկտրաէներգիայի ստացման ամենատարածված ձևերից մեկն է: Դրա միջոցով հնարավոր է դառնում արևի էներգիան վերափոխելու էլեկտրական հաստատուն կամ փոփոխական հոսանքի, և ունենալ մատչելի գնով էլեկտրաէներգիայի սպառում, ինչը կարևոր է բնառեսուրսային վառելիքից զուրկ ՀՀ-ի համար: Այն էներգետիկ համակարգի կայունությանը նպաստող ծրագիր է, ինչպես նաև այլընտրանքային էներգետիկայի ոլորտում ներդրում, որը դրական ազդեցություն կունենա երկրում տնտեսական, բնապահպանական, էներգետիկ և ռազմավարական ուղղությունների զարգացման վրա: Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2023թ. մայիսի 26ի, 174-Ա որոշման համաձայն՝ «Լեռ Սոլար» Ընկերությանը տրամադրվել է 6600 ԿՎտ հզորությամբ ԼԷ №0737 էլեկտրաէներգիայի արտադրության լիցենզիա՝ մինչև 2045թ.

մայիսի 27-ը գործողության ժամկետով: Ընկերությունը դիտարկում է արևային էլեկտրակայանի արտադրած էներգիայի վաճառքը իրականացնել երկարաժամկետ: Արևակայանի շահագործման ընթացքում առաջանալու են նաև վնասված պանելներ և այլ խոտանված մասեր, որոնք կուտակվելու են տարածքում՝ 7 մ^2 չափերով փակ պահեստային շենքում՝ մետաղական վագոն-տնակում՝ մինչև համապատասխան կազմակերպություններին հանձնելը: Արևային կայանի ներկրված պանելներն ունեն օգտագործման երաշխիք, համաձայն որի շարքից դուրս եկած կամ վնասված պանելները հետ են վերադարձվելու արտադրող կազմակերպությանը՝ նորով փոխարինելու նպատակով: Մնացած ժամանակահատվածում շարքից դուրս եկած պանելները կկուտակվեն պահեստարանում՝ պայմանագրային հիմունքներով՝ մինչև դրանց արտահանման կամ վերամշակման հնարավորությունների ստեղծումը:

Շինարարության փուլում բացվելու է նոր աշխատատեղեր՝ 20 մարդու համար: Հաշվի առնելով շինարարական աշխատանքների կարճաժամկետ բնույթը և հեռավորությունը բնակավայրերից, ազդեցությունները կլինեն շատ ցածր:

Եզրափակիչ մաս. Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի և ՀՀ կառավարության 1325-Ն որոշման սահմանված պահանջների՝ հանրային ծանուցումը և քննարկումները կատարվել են Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի դպրոցի շենքում: Հանրային քննարկումների նպատակն է հաշվի առնել բոլոր շահագրգիռ կողմերի և ազդակիր հանրության կարծիքները, առարկություններն, առաջարկություններն և դիտողությունները նախատեսվող գործունեության վերաբերյալ: Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, ներքին գործերի, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, կադաստրի կոմիտեն, Արմավիրի մարզպետի աշխատակազմը, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում: Նախատեսվող գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծության համաձայն, շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում, քանի որ շինարարական աշխատանքների ազդեցությունները իրենց բնույթով սահմանափակ են և կրում են ժամանակավոր բնույթ:

Պարտադիր կատարման ենթակա պահանջներ

Ավտոճանապարհները հատելիս մալուխները անցկացնել պոլիէթիլենային խողովակի մեջ

Պահպանել ՀՀ կառավարության՝ 2000 թվականի մայիսի 18-ի «1000 Վ-ից բարձր լարման էլեկտրական ցանցերի ու մայրուղային խողովակաշարերի պահպանության կանոնների» N 249 և 1998 թվականի մայիսի 26-ի «Էներգետիկայի բնագավառի

օբյեկտների անվտանգության գոտիների չափերը և դրանց օգտագործման կարգը» N313 որոշումների պահանջները և գործող սանիտարահակաճարակաբանական կանոնների ու նորմերի, ինչպես նաև 2009 թվականի ապրիլի 2-ի «էլեկտրական ցանցերի անվտանգության գոտիների վերաբերյալ տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N363-Ն որոշումների պահանջները:

Արևակայանի, ենթակայանի և օդային գծի ապահովումը նախատեսել Կառավարության N363-Ն 02.04.2009թ. որոշման պահանջներին համաձայն:

Արևակայանի պլանային վերանորոգման և վերակառուցման աշխատանքները պետք է կատարել ՏԿ-ի պահանջներին համապատասխան:

Շինարարական աշխատանքների ընթացքում որևէ հնագիտական շերտի կամ հուշարձանի հայտնաբերման դեպքում շինարարական աշխատանքներն անմիջապես դադարեցնել և տեղեկացնել համապատասխան պետական մարմնին (Պատմական և մշակութային հուշարձանների պահպանության վարչությանը):

Էլեկտրահաղորդման գծերում կիրառվող հաղորդալարերի և մալուխների թաղանթները և մեկուսացումը պետք է համապատասխանեցնել եղանակին և շրջապատող միջավայրի պայմաններին:

Շինարարական աշխատանքներն իրականացնել բացառապես ցերեկային ժամերին՝ տարածքում հնարավոր գոյություն ունեցող կենդանիների կենսակերպի վրա ազդեցությունից խուսափելու համար,

Խախտված հողային զանգվածի հնարավորինս արագ վերականգնել՝ տարածքում կենդանական աշխարհի տեղաշարժը չխաթարելու համար,

Գործունեության իրականացման ժամանակ հնարավոր վթարների դեպքում ապամոնտաժել վնասված սարքավորումները, պանելները, էլեկտրահաղորդման հենասյուները, էլեկտրահաղորդման գծերը: Ենթակայանի տարածքում ապամոնտաժել տրանսֆորմատորները, յուղահեռացման համակարգերը և այլ սարքավորումները:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Արմավիրի մարզի Բաղրամյան համայնքի Լեռնագոգ բնակավայրի 2 հողամասում նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայան կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտին տրվում է դրական փորձաքննական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝ Շուշանիկ Կարապետյան